ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«10» ապրիլի 2025թ. № 243

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման թիվ 1 հավելվածի 24-րդ կետի 3-րդ ենթակետով, հիմք ընդունելով «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեի հայտի հաստատումը (քաղվածք՝ 06122ZZ6YZR8) և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի թիվ 842-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, Հարթագյուղ բնակավայրում գտնվող, 06-061-0008-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,10697 հեկտար մակերեսով այլ հողեր գործառնական նշանակության և 06-061-0008-0003 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,09683 հեկտար մակերեսով այլ հողեր գործառնական նշանակության հողամասերի գործառնական նշանակությունները փոփոխել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2. Միավորել 06-061-0008-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,10697 հետկար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության և 06-061-0008-0003 կադաստրային ծածկագրով

բնակավայրերի նպատակային նշանակության 0,09683 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասերը՝ համաձայն հատակագծի:

3. Սույն որոշման 2-րդ կետով միավորված անշարժ գույքին տրամադրել «Սպիտակ համայնք, գյուղ Հարթագյուղ, 5-րդ փողոց, 35 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1816):

4. Սույն որոշումով կատարված փոփոխությունները և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Ե. Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. ապրիլի 10
ք.Սպիտակ